ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հոկտեմբեր 2018 թ. N 2022Ա

ք.Ստեփանակերտ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝

որոշում եմ.

1. 2018 թվականի հոկտեմբերի 7-ին կայանալիք Արցախի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրությունների նախընտրական քարոզչության անցկացման նպատակով քարոզչական պաստառներ կամ այլ տպագիր նյութեր փակցնելու համար առանձնացնել անվճար տեղեր՝ համաձայն հավելվածի:

2. Յուրաքանչյուր թեկնածուի համար սահմանել առանձնացված տեղերում տեղադրված վահանակների համապատասխան հատվածի A-3 ֆորմատի /300*420մմ/ մակերես՝ այբբենական կարգով տեղադրելու համար:

3. Արգելել քարոզչական պաստառներ փակցնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերի, բազմաբնակարան շենքերի և բնակելի առանձնատների, հասարակական նշանակության (սննդի, առևտրի և այլն) օբյեկտների ազատ մակերեսներին, ինչպես նաև տրանսպորտային միջոցների վրա կամ ներսում՝ անկախ սեփականության ձևից:

4. «Բնակշահագործման տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ապահովել չքվեարկվող թեկնածուների մասին քարոզչական պաստառների հավաքումը, վերահսկել ընտրություններից հետո քվեարկված թեկնածուների կողմից քարոզչական պաստառների հավաքման գործընթացը:

5. Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի բնակարանային, կոմունալ տնտեսության և բնապահպանության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Ստեփանակերտի քաղաքապետի
2018 թվականի օգոստոսի 23- ի
N 2082-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՏԵՂԵՐԻ

1. Ազատամարտիկների 21,28 շենքերի հարակից տարածք
2. Ազատամարտիկների 35 (ավտոկայանի հարակից տարածք)
3. Մ.Մաշտոց և Արմ.Իսակով փողոցների խաչմերուկ
4. Հեքիմյան 11,30 (եկեղեցու հարակից տարածք)
5. Հեքիմյան 1 (10-րդ դպրոցի հարակից տարածք)
6. Տ. Մեծ 8բ/1,19 (զինվորական հոսպիտալի հարակից տարածք)
7. Շինարարների 50 և Նաբերեժնայա 32 տների հարակից տարածք
8. Մ.Գոշ 3 շենքի հարակից տարածք
9. Վ.Սարոյան և Կամո փողոցների խաչմերուկ
10. Տիգրան Մեծ 13 շենքի շրջակա տարածք
11. Ս.Շահումյանի անվան պուրակի հարակից տարածք (Ամերիաբանկի մոտ)
12. Հեքիմյան 3կ շենքի շրջակա տարածք
13. Արմ Իսակովի 4ա շենքի հարակից տարածք

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՆԱԶԱՐՅԱՆՅԱՆ